


Արտաքին գնահատում ՏԵՄՊՈՒՍ-ՎԵՐԻՏԱՍ ծրագրի շրջանակներում

TEMPUS-VERITAS ծրագրի շրջանակներում հետազոտողի կրթական ծրագրի արտաքին գնահատման նպատակով հայաստանյան 11 բարձրագույն ուսումնական հաստատությունների շարքում ապրիլի 5-ին արտաքին գնահատում անցավ նաև Հյուսիսային համալսարանը:

Համալսարան ժամանած փորձագիտական խումբը հանդիպում-քննարկումներ ունեցավ բուհի ուսումնահետազոտական աշխատանքների գծով պրոռեկտոր պրն. Գ. Ասատրյանի, որակի ապահովման վարչության աշխատակիցների, մասնագիտության կրթական ծրագրերի պատասխանատուների և ծրագրի աշխատանքային թիմի, պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական ղեկավարների ու ասպիրանտների հետ: Այցի նպատակն էր գնահատել VERITAS ծրագրի շրջանակներում համալսարանի հետբուհական կրթական համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված գործընթացները և ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները: Գործընթացը համակարգվում էր Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի՝ ՈԱԱԿ-ի մասնագետների կողմից: Փորձագիտական խմբում ընդգրկված էին երկու տեղացի փորձագետներ, մեկ միջազգային փորձագետ, մեկ ուսանող-փորձագետ (ասպիրանտ) և մեկ դիտորդ ծրագրի գործընկեր ուսումնական հաստատություններից:



Հանդիպման ընթացքում VERITAS-ի աշխատանքային խմբի կողմից փորձագետների դիտարկմանը ներկայացվեց ծրագրի շրջանակներում մշակված և մեկնարկած պիլոտային ծրագիրը, բուհում հետբուհական կրթական գործընթացը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթը, շրջայց կատարվեց նաև համալսարանի լսարաններ, գրադարան կաբինետներ և այլն: Փորձագետներին ներկայացվեց նաև ծրագրի շրջանակներում համալսարանին տրամադրված համակարգչային տեխնիկայի բազայի վրա ստեղծված նորաբաց ասպիրանտական կրթության կաբինետը:

Երևան ժամանելու անհնարինությամբ պայմանավորված փորձագիտական խմբի եվրոպացի փորձագետ Իսպանիայի Ժիրոնայի համալսարանի պրֆ. Ջորդի Կոլումերի մասնակցությունը քննարկումներին ապահովվում էր սկայպի միջոցով, ինչը սակայն որևէ կերպ չանդրադարձված հանդիպման կարևորության և քննարկումների արդյունավետության վրա: Հանդիպումների ինքնատիպությունը կայանում էր նաև փորձագիտական խմբում, որպես փորձագետ համալսարանի ներկայացուցիչների



ընգրկվածությունը (Իրավագիտության և հասարակագիտության ամբիոնի վարիչ Ա. Խեչոյանը և համալսարանի ասպիրանտ Հ. Հակոբյանը), որի նպատակը հետբուհական կրթության ներբուհական գործընթացների անմիջական մասնակիցների կողմից նշված ուղղությամբ համալսարանում ընթացող գործընթացների գնահատումն էր:

Հանդիպումների վերջում փորձագետների կողմից ներկայացվեցին այն բոլոր դիտարկումները, որոնք արվել էին այցի շրջանակներում: Համալսարանի ղեկավարությունը շնորհակալություն հայտնեց արդյունավետ և կառուցողական քննարկումների համար:

Հ.Գ. Ծրագրի շրջանակներում բուհի կողմից իրականացված ինքնավերլուծության և փորձագիտական այցի հիման վրա մասնագետների խմբի կողմից ներկայացվել է «Հյուսիսային համալսարանի պիլոտային արտաքին գնահատման հաշվետվությունը», որում արված վերլուծության հիման վրա ներկայացված առաջարկությունների ուղղությամբ համալսարանի ղեկավարության կողմից մշակվել են բարելավման քայլեր:

VERITAS-ը (Ձալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում) ՏԵՄՊՈՒՍ-ի եռամյա դրամաշնորհային ծրագիր է (2013-2016 (երկարաձգվել է մինչև 2017)): Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի ասպիրանտուրական կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորումների շրջանակին և Ձալցբուրգյան սկզբունքներին:

Սյուզաննա Սարգսյան

Արտաքին կապերի բաժնի պետ